

Handwritten signature or stamp in the top right corner.

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԿԸՆ ԴԵՂՆԵԿՑՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՅԵՑՏԵՐԳՐԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԳՈՒՆՈՒՄ ԵՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՂ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին " " " 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Ե

Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում " 2 ղա.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ

12 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse“ Tauris (Perse)

ادارة روزنامه «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Գաղթականական Բիւրօ» Հայկ Իսախանեանին

Բ. ՏԱՐԻ

№ 14 ՀԻՆԳՇԱԲԹԻ 26 (13) ՅՈՒՆԻՍ 1919 Թ.

Բ. ՏԱՐԻ

Բացւած է բաժանորդագրութիւն

ՊԵՂԱՍԷՐ

Գրական-գեղարուեստական աշակերտական ամսանախի
Ըրդէն լոյս են տեսել և վաճառուում են ամսանախի № 1 և 2-ը,
չուտով լոյս կտեսնի և № 3-ը:

Բաժանորդագրութեան և այլ պայմանների համար դիմել
ՄՈՒՇԵՆ ԶՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ

Հասցէն՝ Tauris (Perse) Redaction «GUEGHASSER»

ԱՄԵՐԱՅԻՆ ԴԵՍԸՆԹԵՔՆԵՐ

Կազմակերպուած են ամառային դասընթացներ Թաւրիզի հայ-
կական, Թեմական և ծխական դպրոցների վերաբնակի աշակերտ-
ուհիների համար—բոլոր առարկաներից:

Ա. Տ. Օհանեան
Հ. Իսախանեան
Հ. Տ. Օհանեան

3—2

ՉԼԻՆՆԵՐ ՄՏԵՂԱՆ ԵՆ ՅՈՒՆԵՍԻ

Մեզ մօտ, Պարսկաստանում, հայը ապրելով թուրքի հետ հա-
րանութեան մէջ, ենթարկել է մի շարք ազդեցութիւնների, փոխ-
է առել քաւարութեան գծեր և մտածելակերպի յատկութիւններ:
Անձնական կարիքներն ազատու համարձակ յայտնելու մտաւարու-
թիւն, անձնուրէց և անվճարական ոգի—որ առանձնապատուկ է
թուրքին և թուրքի կրօնացեղային կոյր մոլեռանդութեան զուգա-
դիպ՝ մոլեռանդ և աշուտ վերաբերմունք դէպի հաքարակական—
սոցիալական խնդիրները:

Երբեմն լսում ենք խօսակցութիւններ, որոնք վերջում փոխ-
ւում են վիճաբանութիւնների, աշխատաւորական պայքարի, թուրք
կուսակցութիւնների և թուրք աշխատաւորութեան մասին:

Անհատներ կան, որոնք կաշից դուրս են գալիս ապացուցե-
լու, որ թուրք աշխատաւոր մասսան անընդունակ է ընդունելու
որևէ լաւ աշխարհի դասակարգային շահերի և ինքնազիտակցու-
թեան մասին մղող պրոպագանդի որևէ խօսք, որ թուրք աշխա-
տաւորութիւնը կոյր—մոլեռանդ է և որ անցնալի փորձերը մեզ
հանդիպեցրել են դառն հիասթափութեան և բերել այն համոզման,
որ մենք երբէք չպէտք է աշխատենք որևէ կերպ թուրք աշխ-
դասակարգային գիտակցութեան վերաբերմամբ որևէ բայլ անել:

Խօսում են և թուրք կուսակցութիւնների մասին, Կարծիքը
ի հարկէ, աննպաստ է միանգամայն: Մենք ես ոչ մի բանով դէմ
չենք, եթէ ասենք, որ թուրք կուսակցութիւնները, որքան էլ «Դե-
մոկրատ» և «Սոցիալիստական» բառերը փակցնելու լինեն իրենց
ծրագրիները՝ ճակտին, դարձեալ փաստը կը մնայ փաստ, որ թուրք
կուսակցութիւնները, սկսած ուսուցիչ «Մոսսաւաթ»-ից մինչև նրա
արժանաւոր ճետերը՝ «Եթիքիադ», մեզ մօտ, Պարսկաստանում
«Դեմոկրատ» կուսակցութիւնները ոտքից—գլուխ կազմում են

Ֆէօդալ խանների և բէզ—ազալարների՝ բուրժուական տարրերի
խմբակցութիւն, որոնք ամեն բան դատում են համաձայն իրենց
դասակարգային շահերի և այդ ուղղութեամբ էլ գործում:

«Դեմոկրատ» և «Սոցիալիստական» բառերը նորա փակցրել են
իրենց ծրագրների ճակտին և մի քանի այդ կարգի խղճուկ խըն-
դիրներ ու պահանջներ՝ ծրագրի ներսը, որպէս զի կարողանան խա-
բել ու փակել մասսայի աչքերը, մասսա գրաւել դէպ իրենց: Գործ-
նականում փափոքը՝ սկզբն են մեզ համոզելու, որ այդ կուսակցու-
թիւնները չովէն և իմպերիալիստական ու պանիսլամական խնդ-
րակներով տարած կուսակցութիւններ են: Վերջիցէ այդ կուսակ-
ցութիւնների խաղացած տխրահուշակ դերը Անդրկովկասեան վեր-
ջին տարիների քաղաքական կեանքում, մեզ մօտ՝ Պարսկաստա-
նում և այլուր, կը համոզէ այդ կուսակցութիւններին վերադա-
նալ չովէն, իմպերիալիստ և պանիսլամիստ բառերով որակելու
ճշմարտութեան մէջ:

Խօսելով թուրք աշխատաւորութեան և թուրք կուսակցու-
թիւնների մասին, մենք պարզօրէն նկատում և յայտ ենք բերում
այն խոշոր թիւրքիմացութիւնը, որի մէջ խճուկել են նրանք, որոնք
կարծում են, որ թուրք կուսակցութիւնները հանդիսանում են բուրժ-
ւաքաւարութեան թեան իղձերի և ակնկալութիւնների թաւաճման ու զա-
հեղի պաշտպանը:

Այդ կարգի մարդիկ կարծէք երբէք ականատես և իրազեկ չեն եղել
թուրք կուսակցութիւնների գործունէութեան և գործելակերպին,
որոնք երբէք թուրք աշխատաւորութեան շահերից չեն բղխել:

Թուրք բուրժուական տարրերը կրօնացեղային քաղաքականութիւնը
մէջ բերելով ցանկանում են թուրք մասսային ազգային իշխմանը
և կրօնական կոյր մոլեռանդ զգացմունքները հրահրել, մթադնե-
լով և խաւար դրութեան մէջ պահելով թուրք աշխատաւորութեան
միտքը և այսպիսով որքան կարելի է հնարաւորութիւն չտալ թուրք
աշխ. գիտակցելու իւր շահերը և ճանաչելու իւր դիմացիները:

Թուրք աշխատաւորութիւնը այնքան գիտակից չէ, որ ըմբռնի
այդ իրողութիւնը. նա դեռևս չի կարողանում հասկանալ, թէ դէպի
ուր կը տանի իրեն այդ բուրժուական նեղ ազգային մտայնութիւ-
նը: Ահա թէ որտեղից է բղխում կրօնացեղային այն կոյր մոլե-
ռանդութիւնը, որ ցուցադրում է թուրք ժողովուրդը:

Խղճալի մտավախութիւն և աշխատաւորական պայքարի ապա-
գայի վերաբերմամբ յոռետեսութիւն են արտայայտում այն մար-
դիկ, որոնք ասում են՝ «Թուրք աշխատաւորութեան դասակարգա-
յին ինքնազիտակցութեան բերելն անհնարին է: Մենք բացարձա-
կապէս մերժում ենք որևէ պայքար, որ կը մղւի այդ ուղղու-
թեամբ»:

Այդ խօսքերն ասողները վերջապէս պէտք է հասկանան, որ
թուրք աշխատաւորութեան գիտակցութեան բերելը չի կատարւի
միանգամայն, այլ՝ աշխատաւորական «յամառ ու երկարատես» պայ-
քարից յետոյ:

Մենք, որպէս յեղափոխականներ և սոցիալիստներ, ունեցել
ենք մի աննկուն և հաստատ համոզում, որ վերջնական յաղթանա-
կըն ու ապագան աշխատաւորութեանն է ու սոցիալիստական մըտ-
քիւնը: Մենք կը հանդիպենք շատ խոշընդոտների. բայց մեր յառա-
ջագէտ միտքը և յեղափոխական կամքը երբէք չի ընկրկի ոչ մի
դէպքում:

Մենք թուրք աշխատաւորութեան հետ իւր լեզուով չենք խօսել:

չարագ ալ ուտեցնել, միայն թէ չուտ, այլևս չեմ կրնայ համբերել:

Կարծես իւր հոտտ չըթուները մօտեցրուց ականջիս ու չնչնաց:

— Աս մէկ չարաթ է քաղաքում լուր տարածած է ու էգուց թիֆլիզէն մէկ զայաթիւն աղջիկներ պիտի գան հոս:

Այ այստեղին աղջիկները մոզայից ինկած են. ախպար այսպէս ապրելը մահէն աւելի վատթար կը թւայ զիս: Թիֆլիսէն իրանց հիւանդներուն կըսէն եթէ օդերնիդ փոխէք առողջ կըլլաք, այլևս չէք հիւանդանար. ինչ էլ կը թւայ ես ալ գնամ բժշկին քովը ու ըսեմ թէ պարոն բժիշկ հիւանդ եմ, երկու տարի է նոր աղջիկներ ալ չկան, որպէսզի ծանօթանամ կըսէ, դամանիդ փոխէք, անկէ վերջ առողջ կըլլաք:

Ջան, ջան... Է՛հ ինչ կը մտածես, միթէ լաւ համբաւ չըսի:

Տա՛յ... տա՛յ...

Այդ օրը մեր քեֆին, քեֆ չեր հասնելու: Նայեցայ պարտէզին մէջ եղան առհինգ-միջ աղջիկներ հաւաքել էին վերջին մօթ ալէն, որոնք իրանց բաղլը կողբային. չէ որ նորերն անոնց առաջը պիտի փակէին:

Իսկ մենք ապագայի փայլուն յոյսերով տարած լոյսերէն ծանօթ թուրքերէն լիզուով հետեւալ երգը կը երգէինք.

Հարա՛յ:

Կիրակի էր...

Պարտիզում նստած. աչքս չէի հեռացնում այն ճամփից, որտեղէն պիտի գային Թիֆլիզէն նոր եկած աղջիկները: Եւ ահա անոնք...

Ո՛հ, ինչ ուրախութիւն, ինչ հրճանք, ինչպիսի ժպիտներ սահեցաւ մեր տղաներու դէմքի վրայէն. ես հող լուռ դիտողի դեր կը կատարէի և տեսայ ինչպէս հին աղջիկները, որոնք մոզայից ինկնելու վրայ էին, իրենց աչքերի արտայայտութիւնով կը սրբէին: (Աս միջանկեալ էր):

Նոր եկածներուն ընդերքին ալ ճանաչեցի: Անոնցմէ շատերին հետ միեկնային վարմանը հղած էինք և հինգ մատերուս պէս շատ լաւ կը ճանչնայի: Միայն մի քանիսէն չէի ճանչնար, որոնցմէ մէկը կարմիր հագած էր և մէկ անգամ ալ կպած էի անոր հետ, վասնզի անոր անունը կարմիր աղջիկ զրէ. մէկը պզտիկ աչքերով ունէր աղ ալ խոստովին կը նմանէր:

Վերջապէս անոնք կը գուրջէին իւրաք հետ, որոնց խոսակցութիւնն առիթ ունեցայ լսելու:

Ո՛հ սիրելիս ըսեց անոնցմէ ամենից պզտիկը, հոս փողոցներուն վրայ չեմ կրնայ քայլ, վասնզի գի ոտքերս կը ցաւին. հոս ամենքին ալ կատիմ, վասնզի ամենքն ալ փոխուած են:

— Երկրորդն տեսցա՞ց՝ ախ ես ալ, ես ալ հոս մարդիկ անտանելի կը թւան զիս. ախտս որ աս բաղաբնէ մէջ զինւորականներ չեն գտնւեր. ինչքան մաշկ է հոս, ինչքան տխուր կանցնի հոս ժամանակը, հոն ինչ ուրախ էր անգ... զինւորականներու հետ, Աստուած իմ ընտէ արտասուելս կու գայ: Այսպէս արիւրի բարեկամներս նորերու խօսակցութիւնն այդ շրջանակէն գուրս չէր կիւնէր. քանզի մէկ դիտողութիւն ալ լսեցի անոնցմէ մէկէն, որն աւելորդ չեմ համարել զրելու: Այդ առաւօտը Ղալաթին մէջ կայացած հանդիսի մասին էր, որոնք բաւականի դովաններ կը նէին ճամբմանարգութեան ուսուցչին բնութիւնը: Այդ տեղէն գնացի Կարօյին մօտ, որը Է՛կ նամակ գրած էր նոր եկածներուն:

մէկին և որն ամբողջովին կարտազրեմ հոս:

Ամենէն առաջ պիտի ըսեմ ձեզի, որ այդ նամակն ես կարդացած եմ խաթաբային մէջ, որը դարձեալ Կարօ ստորագրութիւնը կը գրէր.

Ահա հ. այն...

Թիֆլիզէն եկած աղւորիկ օրիորդ! Վա՛նէն առաջ ներքի սա նամակս քեզի գրելուս համար: Սանկ նամակով փափաք ունեմ քեզի հետ մօտեցի ըլլալ: Երկու տարի է հոս ինչի՞նչ համար կողակից կը փնտրեմ. երբեք տարի է հոս կենտրոնական զգարուիդ աղջիկներուն նայեցայ, հէ՛լ մէկ տեղ չգտայ որտեղ ուզած աղւորիկ աղջիկ մը... Վասն զի այսօր քեզի տեսալ օրիորդ ջան և զի փափաքեմ, որ դուք ըլլաք իմ «սրտակիցն», անոր համար որ՝

«Դուք ընթերցաւ օրիորդ մըն էք:

— Սալ ընթերցաւ Երիտասարդ մըն եմ:

«Դուք Յովնանեան դպրոց կուսէք,

— Ես ալ ուսեր եմ զինքնօրհակաց պատեհը»:

«Դուք սիրունաստեւ էք,

— Աս ալ իմ միայն փափաքս է:

«Ձեր կազմածքն աղէկ է,

— Սո ալ իմ երազածս է:

«Ձեր բոլոր սանկ աղւոր մըն է,

— Ասիկա ես մոռով կը փնտրէի:

«Ձեր հայրը հարուստ է,

— Աս ալ իմ երազածս է:

«Կըսէն որ դուք Գիւղիմի վրայ հէ՛լ չէք

զգոսներ,

— Ես ալ կղար քիչէին վրայ հէ՛լ երազ չեմ:

«Դուք մութն ընկնելուն պէս տանք

«Կըլլաք,

— Ես ալ աղ փախը հէ՛լ դուրս չեմ կենայ:

«Դուք հէ՛լ մի քաւալի մալ չունէք,

— Ես ալ տալա մը չունիմ, որ այնպէս կարօտ եմ կուր:

«Ասանկ սիրելի օրիորդիկս, մէկը մէկու

հետ քալու կըլլանք. փասն զի ես քեզ

«Կը. սիրեմ, դուն ալ ինչի՞նչ սիրէ և ամեն

բան աղւոր պիտի վերջացուցնեք:

Փոռտներուն զարկալարը պազնոր, քո աչքերը սիրող ու քո գողերուն ըսպասող:

անհամբեր Կարօ

Սիրելի ընթերցող, սա նամակն արտագրելէն ետքը անցնեք քոնայադը՝ ջիւղներուն, որոնք, առանց քաւալի մնացած և և որոնց օրտնեցից արուն կը կաթնէ: Ես նոր հասկըցայ միայն անօրայ օր. Ս. ին խօսքերը.

«Երբ ցաւը վարակիչ ցաւ մըն է

երեք օրէն վերջը պատճառը կիմանաս:

Ու միշտ ալ նոր եկած աղջիկներու խօսքերը կըզարնէին ականջիս: Այս փողոցներուն վրայ չեմ կրնայ քայլ, օտնեմ անչափ կը ցաւիմ»:

Իսկ Կարօն նամակը բռնած ձեռքին կը երգէր:

Հարա՛յ:

ԵՍ—ՉԵՄ

ՄԵՐ ԴՊՐՈՅՔ ՄԵՐ ԱՌԱՋ ՓԱԿ

Սոյն չբութեամբ հարկ ենք համարում մի քանի խօսք ասել այն անփոխ վերաբերմունքի համար, որ տաճում է Թեմական գրպոցի հոգաբարձութիւնը:

Մանկավարժական Խորհուրդը և հոգաբարձութիւնը, որ շարունակ պահանջում է աշակերտու-

թիւնից լինել իսկական աշակերտներ խօսելով դաստիարակութիւնից, որ նախ քան արձակուրդը և արձակուրդից լինելով ամբողջական վրայից գեղեցիկ խօսքերով պահանջում էին մեզին չթափառել ապականւած փողոցներ, այսօր հէնց նոյն դպրոցի հոգաբարձութիւնը մեր դպրոցի դռները փակել է մեր առաջ:

Փակել դպրոցի դռները իրեն աշակերտութեան առաջ և թողնել որ նա ստիպւած շատ աւելի գուցէ անվախ վարչերում ու խանութներում ժամանակ անցկացնի. դա միանգամայն անիրաւացի է, մանաւանդ աւելի ևս պատարակել է լինում այն ժամանակ, երբ այդ հոգաբարձութիւնը կազմած է լինում աւելի գիտակից և ինտելիգենտ տարրերից:

Գուցէ միանգամայն ալ կերպ է մտածում հոգաբարձութիւնը, գուցէ նա մտածում է, որ դպրոցական տարին վերջանալուց լինելով նախկին աշակերտն ալևս աշակերտ չէ. բայց չէ որ այդ նոյն աշակերտութիւնը պէտք է առաջիկայ ուսումնական տարին կրկին դպրոց լաճախի. չէ որ նա պէտք է լինի նոյն դպրոցի աշակերտութիւնը:

Այդպիսի մի հասակում, ինչպիսի հասակում, որ գտնւում է մեր աշակերտութիւնը, երբ ամեն մի գործ նրա մէջ միս ու արիւն է դառնում, երբ դեռ նոր է կազմակերպւում նրա բնաւարտութիւնը և որի ընթացքում ամեն մի բացասական երևույթ կարող է վատ ազդել նրա վրայ և նորիսկ նրա բնաւարտութեան կարգն հանգիստալ, այդպիսի իրողուկ գրութեան մէջ թողնել աշակերտութեան, այդպէս անփութեան վերաբերւել նրա դաստիարակութեան գործի, դա նոյնքան պախարակելի է որքան պախարակելի կը լինէր այն, որ ցնիւր մէջ ընկած մէկի ձեռքը կախ թողնել օգուտ և չօգնել նրան ցելից դուրս գալու համար:

Այդպիսի վերաբերմունք դէպի աշակերտութիւնը միշտ է եղել և այդ ոչ միայն հոգաբարձութեան, այլ և նոյնիսկ դպրոցական վարիչների կողմից գեռ ուսումնական տարւայ մէջ:

Դեռ երէկ էր, որ նոյն դպրոցի ներկայացուցիչը ամբօսել վրայից աշակերտութեան փողոցները չթափառելու մասին էր խօսում, գեռ երէկ էր երբ Հայր Սրբազանը ըզգուշացնում էր աշակերտութեան խոստովան փողոցներից ու վատ շրջանից:

Իսկ այսօր մեր պատուելի հոգաբարձութիւնը չբարեկամ իրեն ու իրենից մեծերի քարոզները և հորդորները փողոցի գռներն է բացում մեր առաջ:

Ո՛ր գնանք մենք, որտեղ անցկացնենք մեր ժամանակները ար-

ձակուրդի ընթացքում. փողոցում թէ՛ դպրոցում. և եթէ մեր հոգաբարձութիւնը պատու էր է կարդում մեզ խուսափել փողոցներից, ապա հետաքրքիր է իմանալ ինչու է նա մեր դպրոցի դռները փակում մեր առաջ, բացելով փողոցի ապականւած դուռը:

Սրանով գալիս ենք դիմելու ձեզ խորհրդու իրականացնել ձեր խօսքերը, յարգել ձեր յորդորներն ու քարոզները՝ բացելով մեր դպրոցի դռները մեր առաջ:

Լիալիս ենք որ ընդառաջ կը գնաք մեր արդարացի առաջարկին, յարգելով հէնց ձեր առնչակիր:

Անսկեքս

ԴԷՊԻ ԼՈՒՍԱՆՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Դարերից ի վեր մեր գլխին, դամոկլեան սրի պէս կախած էր ստոր բռնակալութեան թուրը. օձի նման, ճզմում ու խեղդում էին միզ ստրկութեան զապիթ շրջանները, բռնակալական կամայականութիւններն ու անխնայ հալածանքներն, որոնք իրենց առօրեայ ննջակալութեամբ քամում էին հայ ժողովրդի արիւնը:

Սակայն իրաւագործ ու ըստուկ հայը, շարժախեց անգութ ոտիսին, գետին հաւասարեցրեց նրա ոյժն ու դրանց աւերակների վրայ վերականգնեց մի մանուկ բայց կենսունակ հանրապետութիւն:

Բայց շատ թանգ արժեք մեզ այդ հաղարաւոր եղբայրների վճիռ արիւնով, տասնազարաւոր մայրերի ու բոյրերի արցունքով գնեց այդ Հանրապետութիւնը. բացի դրանից մեր աշխատաւոր մասսան յուզեց, ուժասպառ եղաւ, բայց չընկճեց՝ դիմացաւ: Սակայն ոչ մի գնով մենք չենք թողնի մեր ձեռքից այդ անգին գոհարը. դրա համար էլ պիտի նորից ոգևորել, նորից կազդուրել հայ աշխատաւոր մասսային, անգին հայրենիքի պաշտպանութեան համար:

Եւ այդ առբը պարտականութիւնն ընկնում է մեզ վրայ՝ պատանի աշակերտներիս վրայ. մենք պիտի լինենք հայ ժողովրդին կենսունակ պահողը:

Արդ, ընկերներ! դէպի լուսաւոր կենտրոնները, չպիտի ժամանակը վատնենք, նա մեզ համար աթմ աւելի թանգ է, օգուտներ առիթից, իւրացնենք ամենակարող գիտութիւնները և իբր պատուստած քաղաքացիներ դիմենք դէպի մեր անգին ու փայլալաւ հայրենիքը՝ դէպի Միացեալ Հայաստան !!!

Ովիկօ

Ժողովներ և Գործընթացներ

ԹԵՄԱԿԱՆՈՒ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԻՑ

Յունիս 1-ին Թեմական գաղութում կայացաւ ընդհանուր աշակ-ժողով, ունենալով օրակարգի խնդիրներ՝ «Հին վարչութեան քառասունգոյն գործունէութիւն և նոր վարչութեան ընտրութիւն»։ Սկզբում ժողովն անցաւ հանգիստ, սակայն վերջում տեղի տւեց չըտեսնած խառնաշփոթութեան։

Ընտրեց նոր վարչութիւն, որը իհարկէ բացառութեամբ, կարելի է ասել, բողոքացած է անարժաններէ։ Ահաւասիկ մի ցաւալի դէպք, միևնույն ժամանակ և ծիծաղելի գործ։

Այժմ, երբ հարկաւոր է կըրթաւ, գաւառիկները ու գիւղացիք քաղաքացիներ մեր խաւը գաւառներէ համար, երբ կողմսի ճանապարհները բաց են և կարելի է ընդհանուր Աշակ. Միութեան հետ համագործակցութեան մէջ մտնել, այն, հէնց այժմ, Թեմականի Աշակ. Միութիւնը փոխանակ ուժեղ և պատրաստի անհատներէ բաղկացած մի վարչութիւն ունենալով, ի ցաւ մեր ամենքին, տեսնում ենք պատահականներէ ու անպատրաստներէ, կրկնում ենք բացառութեամբ, կազմում մի վարչութիւն, մի բան, որ եթէ խորը ընդունելի ենք, կը տեսնենք, որ հաւանականաբար մօտեցնում է Թեմականի Աշակ. Միութեան լուծումը, նամանաւանդ, որ վարչութեան մէջ գտնւած գիտակիցները, հիստորիական իրենց շրջապատողներէ երեխայական դատողութիւններէ, սկսել են ներկայացնել իրենց հրաժարականները։

Այս ամբողջ մեղքը բարդում է մի քանի սնապարծ ու փառամոլ պատահականների վրայ. իսկ Թեմականի աշակերտութիւնից, ցաւի սիրտ արտի տեսի, որ, եթէ ոչ բոլորը, գոնէ մի աչքի զարնող մասը հեռուում է գրանց, առանց նախադասելու այն տեղումը, որը դէպք առաջնորդում են իրենց այդ պատահականները։

Մի գուցէ, նոյն այդ անհատներն արդարանալով փորձ փորձեն և առարկեն, որ դպրոցի ոլորն ընտրւելուց յետ կանգնելու համար է, որ այդպիսիներն ընտրւեցին։

Դա, ի հարկէ, իրաւացի կը լինէր, եթէ հենց այդ հրաժարման պատճառն էլ իրենք՝ այդ սնապարծ ընկերները չլինէին։

Ինչպէս կը համարձակի մի համեմատութեամբ պատրաստի ընկեր վարչութեան անդամ ընտրել, երբ իրեն աչքի տալ է այդ այլովաւոր անհատների ձեռքով պատրաստած մի խումբ, նման այն մոլորանդ մասսային, որ միայն ջնջում է, միայն խորտակում ու

մեղադրում, իսկ աւելին վերականգնելու համար ոլոր չունի, կարողութիւն չունի։

Այս բոլորը թող լաւ հասկանայ Թեմականի աշակերտութիւնը և նախօրոք, ինչպէս ասում են, իր գլխի ճարը տեսնի յետ կանգնի իրեն դէպք կորստեան անդունդը տալով ճանապարհից։

Ովկո

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ղարաբաղի հայ գործիչները Թիֆլիզից էլ արտաքսուած

Ղարաբաղի ազգային խորհրդի նախագահ Եղ. Իշխանեանը և հասարակական գործիչները Յ. Թումանեանը ու Ստեփանուր Աւետիսեանը Անգլիական միսիոնար պահանջմամբ երէկ մեկնեցին Երեւան։

Սուվբըն Հայաստան

Կրօն 8 լուծիս. — Տաճկաց ներկայացուցիչները Պարիզ են կանչւում լուծիս 17-ին։ Եթէ Ամերիկան լանձն չառնի Գ. Պօլսը կառավարելու, ապա Հայաստանին Թիւրքիայում կատարեալ անկախութիւնը կը վերապահւի։ Ամերիկան Թիւրքիայի հետ լինելիք բանակցութիւններին կը մասնակցի որպէս Գ. Պօլսի ապագայ կառավարիչը։ (Ռոյտ. հաղ.)

Հայերը Փրանսիայում

Հայ ճանապարհորդը երբ ոտք է դնում Փրանսիական հողը, Փրանսիական սահմանապահ իշխանութիւնների կողմից ստանում է լատուկ անցագիրը «Հայկական» հպատակ մակագրութեամբ։ Այդպիսի անցագիրներով հայերը կարող են անարգել-ճամբորդել ուր որ ուզեն և կատարելապէս վայելում են նոր իրաւունքները, ինչ որ Փրանսիական քաղաքացիները բացարձակապէս մերժում և չեն ճանաչում հայերի համար արւած տաճկական անցագրերը։

Աջարիան ուղղում է միանալ Հայաստանին

Երեւանի «Աշխատանք»-ի ասելով, Աջարիայից պատգամաւորներ են եկել Կարս և լայտնել, թէ՛ նկատի ունենալով, որ հարաւարւածեան Գովհարի անկախութիւնը չի իրաւորւում, Աջարիան որոշել է չմիանալ Վրաստանին, որը հաւանում է նրա լեզուն ու կրօնը, այլ ցանկանում է Հայաստանին միանալով ինքնավարութիւն ստանալ։

Իզդիլիի շրջանում

Կոմիսար Բաբասեանը մայիսի

29-ից հետադրում է Հայաստանի ներքին գործերի մինիստրութեանը, որ Հայաստանի անկախութեան տարեդարձին, Իզդիլիի գործաւոր վեց ժամ տեղի կուրս լետոյ գրաւել է Թաշի ջալ, Բարանսարալ (խան), Կոր-նասար, Սամա-կուճան և Գոճակ քրդական գիւղերը։

Գոտորածը Ղարաբաղում

Միանգամայն ստուգ և արժանահատ աղբիւրից տեղեկացանք, որ Ադրբեջանեան զօրքերը Սուլթանովի գլխաւորութեամբ մասսայական կոտորած են սկսել Ղարաբաղում։ Աւերւած և հրդեհւած են վեց հայկական գիւղեր՝ Խանքենդի ուղղութեամբ և հաւաքւած առայժմ վեց հարիւր և քսան հայերի դէպք, դիակներին մէջ խոշոր տոկոս են կազմում երեխաներն ու կանայք։

Տաճկական սպաները Ղարաբաղում

Նայն աղբիւրից լայտնում են մեզ, որ Ղարաբաղի անպատակող Ադրբեջանի զօրաշարքերում հսկայական զէր են կատարում տաճկական սպաները։ Այդ մասին գիտէ և անգլիական հրամանատարութեան [ոգու միսիոն, բայց բաւականաչափ ոլոր չունենալով իր տրամադրութեան տակ, անկարող է որ-ւէ իրական քալ անելու։

Ինչպէս հատկանալ անպիտան կան մամուլի քիւրօի վերջին տեղեկութիւնը

Անգլիական տեղական մամուլի քիւրօի պետը հաղորդում է, որ Ղարաբաղում զրութիւնը հանագիտ է. սպանել է 15 թուրք, աւելի պակաս թւով հայեր և մի հնդիկ։ Սա մեր ունեցած վերջին տեղեկութիւնն է։

Դրութիւնը Ղարաբաղում

Ղարաբաղի Հայոց Ազգային Խորհուրդն ուժեղացրած կազմով քաղաքից տեղափոխւել է շրջան իր ձեռքն առնելով լուծալին Ղարաբաղի ամբողջ իշխանութիւնը։ Դառնալով տեղի ունեցած ընդհարման առաջին օրը շրջանից հայկական մի զօրագունգ մօտ չորս հազար հոգուց բաղկացած շարժւել է դէպք քաղաք, բայց շնորհիւ անգլիացիների միջամտու-

թեան Ազգային Խորհրդի կարգադրութեամբ զօրագունգը քաղաք չի մտել։

Միլիի յայտարարութիւնը

Թիֆլիսի «ՅԱՄ. ՍՈՒ» թերթում կարգւում ենք. «Ահա հաղորդում են, որ գեն. Միլը Եկատերինոպոլում պաշտօնապէս յայտարարել է, թէ հաշտութեան Կոնֆերանսը չէ ճանաչել Ադրբեջանի և Վրաստանի ինքնորոշման անկախութիւնը։ Ճանաչւած է միմիայն Հայաստանի անկախութիւնը։

Հայաստանի համար ամեն-րիկեան գինւոր

Նիւ-Եօքք. 4 մայիս, 1919
Ովկիանէն անդին 50,000 Ամերիկեան կամաւոր զօրք ջրկել որոշւեցաւ և ասոր համար Միացեալ Նահանգներու պատերազմական նախարարութիւնը կաշ մը հրոտարտւեց. հրաւիրելով բոլոր փափաքող երիտասարդներին իբր կամաւոր գինւորագուել մինչև մայիս ամսուան վերջը, Խանդավառութիւնը մեծ է գինւորագրւելու համար աւելի մեծ՝ քան ինչ որ եղաւ Ամերիկայի պատերազմի մասնակցելուն առաջին օրերը։

Ձինւորագրւողներու թիւը օրէ օր կաւելանալ, հսկողակ անօր, որ հայ երիտասարդներ չեն ուզեր արձանագրւել այս գինւորագրութեան, իրենց անձը վերապահելով բուն հայկական գինւորների դերին։ Դեռ շաբաթներ կան որպէս զի աւարտի կոչին պայմանաւոր և արգէն իսկ 17,020 կամաւորներ տրձանագրւած են։ Միայն վերջացող շաբաթւան մէջ արձանագրւեցան 8527 ամերիկացի երիտասարդներ։ Ասոնց առագործաւոր, 5000. գինւոր, այսօր վաղը ճամբալ կը հանել իր բոլոր կազմով։

Այս պայմաններուն մէջ և գիտակից ըլլալով ամերիկեան ծերակուտականներու վեճ մասին մտալնութեան, արգէն իսկ ստուգ կընդկատել թէ ամերիկեան քոնկոնէ պիտի ընդունի Հայաստանը, հովանաւորելու լանձնաւորութիւնը որուն համար աշխուջ ջանքեր չենք խնայեր ամերիկահայերու։

Խմբագրական մայրմիճ

Ա Ջ Դ

Յայտնում ենք ի գիտութիւն նրանց, որոնց մօտ ժամանակի ընթացքում այս կամ այն պատճառով մնացել են Հ. Յ. Դաշնակցութեան գրադարանի զբոսիցի, թողարար լինեն անմիջապէս վերադարձնել վարչութեան, որպէս զի նա նախարարութիւն ունենայ մօտ ապագայում վերաբացելու Դաշնակցութեան գրադարանը։

Հ. Յ. Դ. Գատ. Միութ. Վարչութեան կողմից՝ Հ. Բախանեան